ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-4

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

28.11.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Սիրոյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Դ. Աֆյանը, Ա. Մուրադյանը, ՈՒԳԸ նախագահ Թ. Ջանվելյանը, ՈՒԽ-ի նախագահ Ի. Բադիրյանը, Հ. Սանթրոսյանը, Զ. Հարությունյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Հաղորում 1-ին կիսամյակի առկա ուսուցմամբ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին(զեկ. Ա. Մարգարյան):
2. Հեռակա ուսուցմամբ 1-ին կիսամյակի առաջին և առկա ուսուցմամբ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին(զեկ. Ա. Մարգարյան):
3. 2023-2024 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատում/հեռակա/(զեկ.Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):
4. Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների սահմանման մասին(զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):
5. Տնտեսագիտության ֆակուլտետից ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի անդամների առաջադրման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Բաց քվերկությամբ 15 կողմ,0 դեմ,0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

- Հաստատել նիստի օրակարգը

1. ***Լսեցին.- Հաղորդում 1-ին կիսամյակի առկա ուսուցմամբ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը հաղորդեց 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների մասին: Նա նշեց, որ ֆակուլտետում առկա համակարգում սովորում է 153- ուսանող, «Ֆինանսներ» ԿԾ՝ 96, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 57: Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ 2023-24 ուստարավա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները կազմակերպվել են ՈՒՄՎ կողմից սահմանված ժամկետում (ս/թ հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 2-ը), որից 15 ընթացիկ ստուգում և 27 ընթացիկ քննություն: Մասնավորապես «Ֆինանսներ» ԿԾ կուրսերում (1- 4-րդ) 6 ընթացիկ ստուգում, 14 ընթացիկ քննություն, իսկ «Զբոսաշրջություն» ԿԾ կուրսերում (1-4-րդ) 9 ընթացիկ ստուգում, 13 ընթացիկ քննություն: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը, սահմանված ժամկետներում պահանջել և ստացել են տոմսերը, թեստերը: 2023-24 ուստարվա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննություններին և ստուգումներին չի մասնակցել 154 ուսանողից 2-ը, որից 1 ուսանող հիվանդության պատճառով: 30 ուսանող ունեն պարտքեր: Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ ֆակուլտետի ընդհանուր միջին առաջադիմությունը կազմել է 81%՝ «Ֆինանսներ» ԿԾ՝ 72%, «Զբոսաշրջություն» ԿԾ 95% :

Որոշում. - Հաղորդումն 1-ին կիսամյակի առկա ուսուցմամբ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- Հեռակա ուսուցմամբ 1-ին կիսամյակի առաջին և առկա ուսուցմամբ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին(զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը հաղորդեց I կիսամյակի հեռակա ուսուցմամբ առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել ս/թ դեկտեմբերի 19-29 ընկած ժամանակահատվածում, իսկ առկա ուսուցմամբ երկրորդ ընթացիկ քննություններն ու ստուգումները՝ ս.թ.դեկտեմբերի 22-29:

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը ըստ կուրսերի և ըստ օրերի: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են տոմսերը, թեստերի նմուշները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Հաղորդումը հեռակա ուսուցմամբ 1-ին կիսամյակի առաջին և առկա ուսուցմամբ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.- 2023-2024 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատման մասին(հեռակա)(զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):***

Գ. Սիրոյանը նշեց, որ հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերում բաշխված են ավարտական աշխատանքի թեմաները: Նա նշեց, որ ամբիոնում քննարկվել և հավանություն են տվել բացառապես ֆինանսներ մասնագիտությանը վերաբերող թեմաներ:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնն ավարտական աշխատանքների թեմաների ընտրության հարցում առաջնորդվել են իրենց կողմից որդեգրած քաղաքականությամբ: Մասնավորապես. ընտրվել են ավարտական աշխատանքների այնպիսի թեմաներ, որ ուսանողները հնարավորություն

ունենան մարզի խնդիրների շուրջ իրականացնել համապարփակ հետազոտություն:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին – Հաստատել «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» (հեռակա) մասնագիտությունների 2023- 2024 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

4. ***Լսեցին.- Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների սահմանման մասին: (զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան)***

Ամբիոնի վարիչները նշեցին, որ բակալավրի ավարտական աշխատանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից: Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքը պարունակում է հիմնախնդրի ինչպես տեսական մոտեցումները, այնպես էլ գործնական վերլուծությունները: Թեմայի առանձնահատկություններից ելնելով «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքները կարելի շարադրել 35-40 էջի սահմանում, իսկ «Ֆինանսներ(ըստ ոլորտի)»՝ 45-55 էջի սահմաններում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների չափը սահմանել. «Ֆինանսներ(ըստ ոլորտի)»՝ 45-55 էջի սահմաններում, իսկ «Զբոսաշրջություն»՝ 35-40:

5. ***Լսեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետից ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի անդամների առաջադրման մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանն իրազեկեց, որ ԵՊՀ ԻՄ տնօրենի շրջաբերականի համաձայն ԵՊՀ ԻՄ գիտական խորհդի աշխատակարգի հաստատմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ էր մինչև 2023թ. նոյեմբերի 23-ը կազմակերպել խորհրդի նոր անդամների ընտրություններ և ընտրած ներկայացուցիչներին ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Ա. Մարգարյանն տեղեկացրեց, որ ամբիոններում քննարկվել և առաջադրվել են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամներ.

«Ընդհանուր տնտեսագիտություն» ամբիոնի վարիչ Գ. Սիրոյանի

«Տուրիզմի կառավարման և զբոսաշրջության» ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանի թեկնածությունները:

Բաց քվեարկությամբ 15 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ Գ. Սիրոյանն ու Գ. Հովհաննիսյանն առաջադրվեցին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում անդամներ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.7 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.-Հավանություն տալ Տնտեսագիտության ֆակուլտետից ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի անդամներ առաջադրել Գ. Սիրոյանին և Գ. Հովհաննիսյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***